ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2022 թվականի N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՎԱՐԴԳԵՍ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՄԼԵՏ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի և 135-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 35-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, հաշվի առնելով հանգամանքները և հիմք ընդունելով Աշոցք համայնքի բնակչուհի Ռոզա Աղասու Վարոսյանի դիմումը՝ անչափահաս երեխաներին խնամակալ և հոգաբարձու լինելու պատրաստակամության մասին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 19-ի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում բնակվող՝ 2007 թվականի օգոստոսի 5-ին ծնված անչափահաս Վարդգես Արմենի Խաչատրյանի նկատմամբ հոգաբարձու նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, Աշոցք բնակավայր, 3-րդ թաղամաս, 1-ին փողոց, 2-րդ շենք, բնակարան 11 հասցեի բնակչուհի՝ Ռոզա Աղասու Վարոսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում բնակվող՝ 2012 թվականի ապրիլի 18-ին ծնված անչափահաս Համլետ Արմենի Խաչատրյանի նկատմամբ խնամակալ նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, Աշոցք բնակավայր, 3-րդ

թաղամաս, 1-ին փողոց, 2-րդ շենք, բնակարան 11 հասցեի բնակչուհի՝ Ռոզա Աղասու Վարոսյանին՝ մինչև երեխայի 14 տարին լրանալը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի ապրիլի 20
գյուղ Աշոցք